ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» Հոկտեմբեր 2012թ. N 82

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012թվականի սեպտեմբերի 10-ի № 01/15.1/10031-12 գրությունը «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել մարզային գնահատող հանձնաժողով համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիրի №3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Ս.Հարությունյանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ներկայացուցիչ Ա. Մելոյանին, Հայաստան Հանրապետության Արմավիրի զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչ Գ. Անտոնյանին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարար ծառայության վարչության ներկայացուցիչ Պ. Եփրեմյանին, Ռուսաստանի Դաշնության 2038 սահմանապահ զորամասի ներկայացուցիչ Վ. Մանուկյանին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության ներկայացուցիչ Վ. Մանուկյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել երկօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի <<01>>-ի

N 82 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ:

Անդամներ՝

Ա. Առաքելյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ:

Ս. Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ